

ՀԱՎԱԿԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԸՆՓՈՒՄՆԵՐԿ ԲԱՅՆՆԵՐՈՒՆ

(Շարունակում Ա. Էջեն)

չէ կորսնցնենք մեր յոյզը եւ զիջինք մեր իրաւունքն: Երրորդ նախապատուութիւնը Լեռնային Ղարաբաղի հարցին լուծումն է: Բայց երբ Թուրքիա նախապայման կը դնէ Ղարաբաղի հարցին լուծումը եւ գիտակցելով, որ Լեռնային Ղարաբաղի լուծումը մօտ ապագային հնարաւոր չէ, անոր տակ անոնք նախապայման կը դնեն սահմանները բանալու համար, հայկական ուժերու հեռացումը Ղարաբաղի հողերէն:

Եթէ նախորդ երկու կետերուն համար հնարաւոր էր գտնել դիւանագիտական լուծումներ, որոնք կու տային միջին լուծում, ապա Ղարաբաղի հարցով եւ միջին լուծում չէմ տեսներ: Ղարաբաղի հարցը կապել հայ-թրքական յարաբերութիւններուն բացարձակապէս անընդունելի է:

Այս բոլորը այսօր սեղանի վրայ են: Այս բոլորը այսօր կը քննարկուին եւ մեզի իսկապէս մտահոգութեան տեղ կու տան, երբ այդ քննարկումները շղարշուած են մթութեամբ:

Միւրեւի հայրենակիցներ, Յեղասպանութեան կորուստը մեզի համար շատ մեծ է: Այս վերջը, որ Յեղասպանութիւնը ճգած էր մեր ժողովուրդին մարմնին վրայ, անդամանելի է: Մենք չենք կրնար հրաժարիլ մեր իրաւունքներէ: Մենք չենք կրնար: Բայց այդ բոլորին վրայ կը գումարուի նաեւ այսօր մեր աչքին առջեւ տեղի ունեցածը, շատ անելի ծանր կը նստի մեր վրայ: Առաջին հերթին, Թուրքիոյ կողմէ որդեգրուած ժխտողականութեան քաղաքականութիւնը Յեղասպանութեան շարունակութիւնն է: Երկրորդ խնդիրը, որ մեզի այսօր առաւել ցաւ կը պատճառէ, Թուրքիոյ կողմէ վարուող նեղ քաղաքականութիւնն է: Նեղ դիւանագիտութիւնն է, որ այսօր կը շահարկէ Յայաստանի կա-



ռավարութեան ցուցաբերած բարի կամքը: Եկեք չկասկածինք, որ Թուրքիոյ հետ բարի դրացիական յարաբերութիւններ մշակելու Յայաստանի առաջարկը եղած է ազնիւ քայլ: Բայց այսօր, այդ ելակետային պայմանները այնպէս փոխուած են, այնպիսի նախադրեալներ ստեղծուած են, այնպիսի նախապայմաններ առաջարկուած են, որ այդ ելակետային պահը արդէն մեզի համար անճանաչելի է: Եւ ահա այս բոլոր դրսեւորումները ի յայտ եկան Ապրիլ 24-էն երկու օր առաջ, երբ երկու երկիրներու արտաքին գործոց նախարարները ի լուր աշխարհին յայտարարեցին ինչ որ ճանապարհային քարտէս: Սա շատ մուտք է հայ ժողովուրդին համար, նոյնիսկ ինձի՝ իբրեւ արտաքին գործերու նախկին նախարար: Բայց անկախ այդ ճանապարհային քարտէսի բովանդակութենէն, միայն ժամանակի ընտրութիւնը այս հարցին մէջ, իմ մօտ շատ լուրջ կասկածներ կ'առաջանան: Եթէ այս մէկը գուտ պատահականութիւն էր, եւ ուրիշ որեւէ բանի հետ չէր կապուած, սա փաստօրէն ցոյց կու տայ մեր իշխանութիւններու անտարբերութիւնը այս հարցի նկատմամբ, համայն հայութեան նկատմամբ: Սա անհասկնալի է, իսկ եթէ այս մէկը կատարուեցաւ ինչ որ մէկուն առաջնորդութեամբ կամ պարտադրանքով, ճնշմամբ, ակնկալիքով, սա արդէն կը նշանակէ, թէ մենք Յայկական Յեղասպանութեան ճանաչումը դարձուցած ենք առեւտուրի առարկայ: Սա արդէն ոչ թէ անհասկնալի է, սա անընդունելի է:

Միւրեւիներ, անկախութենէն ի վեր, Յայաստանի հանրապետութեան շարունակական իշխանութիւնները միշտ յաջողած են քաղաքական կամք դրսեւորել, Թուրքիոյ եւ Ատրպեյճանի համատեղ ջանքերու դիմադրելու եւ տուրջ չտալու անոնց պահանջներուն, չէրթալու զիջումներու: Ես կոչ կ'ընեմ եւ յոյս ունիմ, որ այսօրուան մեր իշխանութիւնը կը ցուցաբերեն նոյնը շարունակելու:

Միայն 20-րդ դարուն մէջ 15 ցեղասպանութիւն տեղի ունեցած է: Այդ բոլոր գոհերը իրենց յիշողութեան վայրերը ունին: Վայրեր որոնք սփռուած են աշխարհով մէկ, վախի, սպառնալիքի, սպանուելի, ջարդի ու ցեղասպանութեան: Գամայտիացիներուն համար անկապ «Տը Զիլին Ֆիլուզ» է: 21-րդ դարու երեխաներուն համար Տարֆուրն է: Մեզի՝ հայերուս համար Տեր Զորի անապատն է:

Անցեալ շաբաթ ես այնտեղ կը գտնուէի եւ ես նկատեցի, որ մեր մեծ հայրերուն ու մայրերուն կեանքին ու մահուան միջեւ կեցած է միայն բախտն ու անապատի աւազը: Եւ ես կը մտածեի, որ արդէն 90 տարի մենք գոհերս կը փորձենք աշխարհին համոզել, որ ընդամենը ճանչանալ Յեղասպանութիւնը: Մենք գոհերս կը փորձենք համոզել միջազգային հանրութիւնը՝ ո՛ր են մարդկային իրաւունքները եւ անոնք չեն ընդունիր եւ չեն հասկընար, որ ընդամենը մենք կը պահանջենք անոնցմէ անցեալի սխալներու ընդունումը եւ անոնց պատրաստակամութիւնը ապագային ճիշդ կատարելու»:

Ոգեկոչման հանդիսութեան ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր, որուն ընթացքին ելոյթ ունեցաւ Նոր Սեւրուի Մշակութային Միութեան «Արեգ» պարախումբը:

ՄԵՏՎԵՏԻ ԵՒ ՄՈՒՆԱՆ ԼՄԲՏԵՍ

«Ինթերֆաքս» լրատուական գործակալութիւնը հաղորդեց, թէ նախագահ Սերժ Սարգսեանի հետ իր ունեցած հանդիպումէն ետք, Ռուսիոյ նախագահ Տիմոթի Մեդվեդեւն համոզուած է, որ Յայաստան եւ Ատրպեյճան կառուցողական մտտեցում կը ցուցաբերեն Լեռնային Ղարաբաղի հարցին լուծման համար:

Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան գլխաւոր բանագնաց Կառլ Բրյուսը Մոսկուայի ընդունելու է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներու միջեւ յարաբերութիւններու կարգաւորման միացեալ յայտարարութիւնը:

Սոլանա «Արտուրի» նկատեց կատարուած յայտարարութիւնը եւ չափազանց կարեւոր ներդրում մը Եւրոպայի հանգուցային տարածաշրջաններէն մէկուն մէջ անվտանգութիւն եւ կայունութիւն հաստատելու համար:

Սպիտակ Տան Մամուլի ծառայութիւնը հաղորդեց, թէ փոխ նախագահ ժողովի Պայտլըն եւ Յայաստանի նախագահ Սերժ Սարգսեան հեռախոսային խօսակցութիւն մը ունեցած են: Զրոյցի ընթացքին Պայտլըն շնորհաւորած է Յայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներուն միացեալ յայտարարութիւնը:

Նշենք, թէ անցնող օրերուն, Պայտլըն՝ երկրորդ հեռախոսազրոյց կ'ունենայ նախագահ Սերժ Սարգսեանի հետ:

ՕՊԱՄԱ ՄԻԱՅԱԲ ԽՈՍՏՈՒՄՆԱԴՐՈՒԺՆԵՐՈՒՆ

Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամա, դրժեց՝ նախապէս կատարած իր խոստումը եւ Յայկական Յեղասպանութեան յիշատակին առիթով արտասանած իր խօսքին մէջ, «Յայկական Յեղասպանութիւն» եզրը օգտագործելու փոխարէն ըսաւ, թէ «մէկուկէս միլիոն հայերու կոտորածը 20-րդ դարու ամենատեղ ու ցաւալի իրողութիւններէն մէկն էր»: Պարաք

Օպամա կատարուածը հայերէն արտասանելով, ըսաւ. «Մեծ եղեռն»: Այսպիսով, Պարաք Օպամա միացաւ իր նախընտրական խոստումէն ետոյարձ կատարող նախագահներուն շարքին:

ՃԱՆԱԶՈՒՄԸ ՊԱՅՄԱՆ ԶԷ ԵՐԿԿՈՂՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ, Կ'ԸՍԷ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳՍԵԱՆ

Հայկական Յեղասպանութեան 94-րդ տարելիցին առիթով, Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան, Հայ ժողովուրդին յոյճ ուղերձ մը, ուր կ'ըսէ. «Վերապրածներու, անոնց ժառանգորդներու ու համայն հայութեան համար Յեղասպանութիւնը ոչ միայն անցեալի իրողութիւնն է, այլեւ ներկայի ու ճակատագիրի անբաւարար մաս: ...Մենք բազմիցս նշած ենք, որ Յեղասպանութեան միջազգային գործընթացը ուղղուած չէ թուրք ժողովուրդին դէմ եւ Թուրքիոյ կողմէ Յեղասպանութեան ճանաչումը մեր երկկողմ յարաբերութիւններուն հաստատման նախապայման չէ»:

Նախագահ Սարգսեան իր ուղերձը կ'աւարտէ մաղթելով, որ աշխարհի վրայ ոչ մէկ ժողովուրդ չապրի հայ ժողովուրդի ողբերգութիւնը:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԵՄԸ ԿԸ ՊԱՇԱՅԷ ՆԵՐՎԱՅԱՅՆԵԼ ՀԱՄԱՅԱՅՆՈՒԹԵԱՆ ԿԷՏԵՐԸ

Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներու կատարած միացեալ յայտարարութեան լոյսին տակ, Հայ Ազգային Գոնկրէսի ղեկավարութիւնը գումարեց արտակարգ միտք մը եւ իրապարակեց յայտարարութիւն մը, ուր կ'ըսուի. «Երկու կողմերը համաձայնութեան հանգամ են իրենց երկկողմ յարաբերութիւններուն կարգաւորման համապարփակ շրջանակին շուրջ երկու կողմերուն գոհացնող կերպով»: այսինքն՝ ըստ էութեան արտասանած են հաշտութեան շուրջ բանակցութիւնները եւ գործիքն ունի երկկողմ համաձայնութեամբ փաստաթուղթը:

Հաղորդագրութեան ատարին, նշուած էր. «Հայ Ազգային Գոնկրէսը, Հայաստանի գործող իշխանութիւններէն կը պահանջէ անյայտագիր հրապարակել ոչ միայն Հայաստանի, այլեւ համայն հայութեան շահերուն հետ առնչուած այդ փաստաթուղթը»:

Հայ Ազգային Գոնկրէսը իր հաղորդագրութիւնը կ'աւարտէ ընդգծելով, թէ փաստաթուղթին պաշտօնակալն իրապարակումն ենք պիտի տայ փաստաթուղթին նկատմամբ իր գնահատականը:

Սփիւռքի տարբեր ակիւններ վրայ սարող հայերը անընդունելի կը նկատեն Հայ-թրքական յարաբերութիւնները կարգաւորելու ուղղութեամբ, Ապրիլ 24-ի նախօրեակին կնքուած համաձայնագիրը:

Թրքական բազմաթիւ օրաթերթեր, իրենց վերջին համարներով գրած են, թէ Պեռնի մէջ կնքուած համաձայնագիրը կը ճանչնայ Կարսի համաձայնագիրով ճշդուած հայ-թրքական սահմանը:

ԼԻԲԱՆԱՆԱՅՑ ՄԱՍՈՒԻ ՊԱՏԱՍԽԱՆՏՈՒՆԵՐՈՒՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԱՐՈՒՆ ՕՍԿԱՆԵԱՆԻՆ ՇԵՏ

Լիբանանահայ երեք թերթերու խմբագիրները շաբաթ առաւօտ հանդիպում մը ունեցան Յայաստանի Հանրապետութեան նախկին արտաքին գործոց նախարար եւ Սիվիլիթաս հիմնարկի հիմնադիր Վարդան Օսկանեանի հետ:

Ազգակի, Արարատի եւ Չարթօսի խմբագիրները առիթ ունեցան նախկին նախարարին հետ զրուցելու հայկական թղթածրարներուն հետ կապուած տարազան գարգացումներուն շուրջ: Անոնք կը վերաբերին հայ-թուրք յարաբերութիւններուն, Յայաստան-Թուրքիա միացեալ յայտարարութեան, նախագահ Օպամայի կատարած վերջին յայտարարութեան, դարաբաղեան հակամարտութեան եւ սփիւռքէն հարցերուն:

Հանդիպումը առիթ եղաւ նաեւ համատեղ քննարկելու գաղութային ազգային, կրթական, մշակութային եւ մամուլի հետ կապուած հարցեր:

Վարդան Օսկանեանի հետ կայացած այս հանդիպումը օգտակար եղաւ լիբանանահայ թերթերուն, տարազան իրադարձութիւններուն մասին առարկայական եւ խորքային վերլուծումներու իրագրելու դառնալու առումով:

ՄԵԹՐ ՄԵՐԺ ԹՈՒՐՍԱՐԳԻՍԵԱՆ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԵ ԷՆ ՊԻ.ԷՆ.Ի ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ

Հեռատեսիլի ԷՆ ՊԻ.ԷՆ կայանէն սփռուած հարցազրոյցի մը ընթացքին, պետական երեսփոխան Սերժ Սարգսեանը հարցազրուցուեցաւ իր հարցերուն շուրջ: Անոնք կը վերաբերին Սերժ Սարգսեանի եւ այլ շրջաններուն մէջ գործող ուժերու կարծիքը առած չէին, Հայ Կաթողիկէ համայնքի պատկան իրենց թեկնածուին անունը յայտարարելու նախօրէին: Թուրքարգիւսեան Նշեց, թէ Պեյրուսի Առաջին ընտրամասին մէջ Լիբանանեան Ուժերու կողմէ առաջադրուած թեկնածուն իր անձին դէմ ուղղուած չէր: Ան անելուց, որ բանակցութիւնները եւ խորհրդակցութիւնները կը շարունակուին տակալի:

Երեսփոխան Թուրարգիւսեան դիտել տուաւ, որ Հայ քուէարկողները պոյքոյթի պիտի ընթարկեն Պեյրուսի Առաջին ընտրաշրջանի եւ այլ շրջաններու մէջ մնացեալ ընտրութիւնները, եթէ երբեք իրենց առաջադրած թեկնածուները բացակային Մարտ 14-ի ընտրացանկէն:

Ս.Գ.Հ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ս.Գ.Հ.Կ. ընտրական կեդրոնական մարմինը կու գայ ձեռնարկեալներ, թէ յետ այսու իր Նոր Հաճոյ եւ Անթիլիասի գրասենեակները բաց են ընդունելու եւ ստուգելու ձեռնարկական կարգավիճակը:

- Նոր Հաճոյ գրասենեակ (01-444738) բաց է շաբթուան բոլոր օրերը ժամը 9:00-էն 8:00, Շաբաթ օրերը, ժամը 10:00-էն 5:00:
- Անթիլիասի գրասենեակ (04-522345) բաց է շաբթուան բոլոր օրերը ժամը 11:00-էն 4:00 բացի՝ Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Ս.Գ.Հ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ



Ազգ. Ռուբինեան-Սահակ Մետրոպէան Վարժարան

ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ՝
Հոգաբարձութեան
Մասնակցութեամբ սիրուած երգիչ՝
ԿԱՐՈ ԿԱՊՈՒՏԱԿԵԱՆԻ

Նուագի ընկերակցութեամբ հանրածանօթ արուեստագետ
հաշիկ Մախասեանի

Տեղի կ'ունենայ Կիրակի, 10 Մայիս 2009, կէսօրուան ժամը 1:00-էն սկսեալ, «Նահր Ալ ժաննա» ճաշարանին մէջ, Նահր Էլ Զէլպ:

Յ.Բ.Ը.Մ.
Յ.Ե.Ը.

«ԱՆԴՐԱՆԻԿ»
ՄԵԿԱՎՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 94-ԱՄԵԱԿ

Հանդիպում Սպանացի լրագրող
ԽՕՍԷ Ա. ԿՈՒՌԻԱՐԱՆ-ի հետ

Հեղինակ՝ «Ռուբըն» եւ «Հայերը եւ Մոռցուած Յեղասպանութիւնը» գիրքերուն
Դասախօսութիւն-զրոյց

Հինգշաբթի, 30 Ապրիլ 2009, երեկոյեան ժամը 8:30,
Յ.Բ.Ը.Մ. Տեմիրճեան Կեդրոն, 2րդ յարկ, Նաքքաշ:

Հրատել

Կ՝ՈՒԶՈՒԻ

Kodak Հաստատութիւնը կարիքը ունի electronic ուսանած երիտասարդի մը: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 03-286678 թիւին կամ CV-ն ուղարկել հետեւեալ e-mail-ին: kanekour@dm.net.lb

ԱՅՍՕՐ՝ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՉ

26 ԱՊՐԻԼ
* 1828՝ Ռուսիա պատերազմ կը յայտարարէ Թուրքիոյ դէմ:
* 1928՝ Լոնտոնի մէջ կը կատարուի Մատամ Թիւստի ցուցարահին բացումը:
* 1986՝ Չերնոպիլի արոմակայանին մէջ, պայթում մը կը խլէ հազարներու կեանքը:
* 2005՝ 29 տարուան ծառայութենէ ետք, սուրիական ուժերը վերջնականապէս կը հեռանան Լիբանանէն:
* 1564-ին ծնաւ Ուիլիլմ Շէքսպիրը:
* 1731-ին մահացաւ անգլիացի գրող Տալմիլ Տեյթսը:

ARARAD DAILY NEWSPAPER

Tel. - Fax: 01-56 55 99
P.O.Box: 175275 MAR MIKHAEL, BEIRUT - LEBANON
Website: www.araraddaily.org e-mail: ararad@terra.net.lb

جريدة يومية سياسية ارمنية
تصدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.م.)
المدير المسؤول: ابيسوغوم كرشيكيان